

ԼԵՎՈՆ ՍՏԵՓԱՆԻ ԽՈՉԻԿՅԱՆ

1982 թ. մարտի 12-ին կյանքից հեռացավ սովետահայ անվանի պատմաբան, բանասեր-աղբյուրագետ, Մատենադարանի տնօրեն, ՀՍՍՀ գիտության վաստակավոր գործիչ, ակադեմիկոս Լևոն Ստեփանի Խոչիկյանը:

Լ. Խոչիկյանը ծնվել է 1918 թ. մայիսի 1-ին, Երևան քաղաքում: 1935 թ. ավարտելով Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը, ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Համալսարանն ավարտելուց անմիջապես հետո, 1940 թ. աշխատանքի է անցել Մատենադարանում, սկզբից որպես բիրլիոգրաֆ, ապա՝ ձեռագրական բաժնի վարիչ, իսկ 1954 թվականից մինչև իր կյանքի վերջին օրը՝ որպես տնօրեն: 28 տարի անընդմեջ վարելով այդ պատասխանատու պաշտոնը, Լ. Խոչիկյանը որպես գիտնական և գիտության կազմակերպիչ մեծ ավանդ է մուծել հին հայերեն ձեռագրերի ամենամեծ հավաքածուի ուսումնասիրման, նրա ֆոնդերի հարստացման և բարձր որակավորման ձեռագրագետ-բանասերների պատրաստման գործում: Այդ տարիներին Մատենադարանը որպես ձեռագրական մշակույթի ուսումնասիրման ու պահպանման եզակի գիտական կենտրոն ձեռք բերեց համաշխարհային հռչակ: Այստեղ Լ. Խոչիկյանի ղեկավարությամբ ծավալվեց լայն աշխատանք մատենագրական հուշարձանների հետազոտման և հրատարակման գծով, բացվեցին ուսումնասիրությունների նոր ասպարեզներ, կապեր հաստատվեցին սովետական և արտասահմանյան ձեռագրական կենտրոնների հետ:

Լինելով ներհուն պատմաբան ու բանասեր ակադ. Հ. Մանանդյանի աշակերտը, Լ. Խոչիկյանը երիտասարդ տարիքից համակվեց ձեռագիր մատյանի հանդեպ աննահանջ սիրով, մատյանի, որն իր մեջ պարունակում է շրացահայտված բազում գաղտնիքներ և հետազոտողին պարզում հայտնագործության բերկրանքը: Լ. Խոչիկյանի համար աշխատանքը ձեռագրի վրա ստեղծագործական պրոցես էր, որն իր մեջ ընդգրկում էր հուշարձանի մանրակրկիտ զրբագիտական հետազոտությունը՝ նրա բովանդակության և պատմամշակութային արժեքի համակողմանի հետազոտման հետ մեկտեղ:

Գիտական գործունեության ողջ ընթացքում ամեն մի ձեռագրի հանդեպ կիրառված նման մոտեցումը հնարավորություն տվեց Լ. Խոչիկյանին գիտական շրջանառության մեջ դնել մի ամբողջ շարք նորահայտ հուշարձաններ, ինչպես նաև բազմաթիվ արժեքավոր տեղեկություններ միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի, վանական դպրոցների գործունեության, գրչատների և գիտական մտքի օջախների վերաբերյալ: Այսպես, ձեռագրական նոր տվյալների հիման վրա «Գլաձորյան համալսարանը և նրա սաների ավարտական ատենախոսությունները» հոդվածում (1946) գիտական մտքի այդ խոշոր կենտրոնը իր արժանի տեղը զբաղեց գիտության պատմության մեջ:

Նույն եղանակով առաջին անգամ մանրամասն լուսարանվեց Տաթևի, Ծործորի և Քոնայի ականավոր ներկայացուցիչների զրական և գիտական գործունեությունը («Մատթեոս Զուղայեցու կյանքն ու մատենագրությունը», 1956, «Արտազի հայկական իշխանությունը և Ծործորի դպրոցը», 1973, «Քոնայի հոգևոր մշակութային կենտրոնը և Հովհաննես Քոնեցու գիտական ժառանգությունը», «Յովհաննէս Քոնեցի, Յաղագս բերականին» գրքում, 1977):

Զեռագիր սկզբնաղբյուրներից բաղված նոր ավյալների հիման վրա Լ. Խաչիկյանը նորովի լուսարանեց միջնադարյան քաղաքի, գյուղական համայնքի և ազանդավորական շարժումների պատմության էջերը («Ազանդավորական գաղափարախոսությունը Հայաստանում 12—14-րդ դարերում», 1947, «Փոքր Հայքի սոցիալական շարժումների պատմությունից», 1951, «14—15-րդ դարերի հայկական գյուղական համայնքի մասին», 1958, «Երզնկա քաղաքի «Սղբարց միաբանության» կանոնադրությունը», 1962): Լ. Խաչիկյանը արժեքավոր հետազոտություններ է նվիրել հայ ֆեոդալական տների պատմությանը, հատուկ կանգ է առել երկրի սոցիալ-քաղաքական և մշակութային կյանքում նրանց խաղացած դերի վրա («էջեր համշինահայ պատմությունից», 1969, «Սյունյաց Օրբելյանների Բուրթելյան ճյուղը», 1969):

Սովետական պատմագրության և աղբյուրագիտության բնագավառում խոշոր ավանդ հանդիսացավ Լ. Խաչիկյանի պատրաստած XIV—XV դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարանների քառահատոր հրատարակությունը (Եր., 1950—1967), ընդարձակ ներածական ուսումնասիրություններով: Այդ աշխատությամբ Լ. Խաչիկյանը լրացրեց պատմագիտության մեջ եղած բացը և գիտական շրջանառության մեջ դրեց հարուստ փաստական նյութ, որի կարիքը վաղուց արդեն զգում էին Հայաստանի և հարևան երկրների քաղաքական, տրեսասական և մշակութային կյանքի պատմությամբ զբաղվող միջնադարագետները: «ԺՆ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» աշխատության համար Լ. Խաչիկյանին 1961 թ. շնորհվեց պատմական գիտությունների դոկտորի աստիճան: Անվանի ռուս միջնադարագետ ակադ. Մ. Ն. Տիխոմիրովը գնահատեց այն որպես մի քանի դոկտորական դիսերտացիաներին հավասար կոթողային աշխատություն, որն անփոխարինելի մի սկզբնաղբյուր և հետազոտություն է XV դարի ողջ Անդրկովկասի պատմության լուսարանման համար: Այդ երկու գիտնականները կապված էին իրար երկար տարիների բարեկամական ստեղծագործական կապերով: Դրան շէր խանգարում տարիքային մեծ տարբերությունը: Նրանց միավորում էր հարազատ ժողովրդի պատմության ու մշակույթի հանդեպ ունեցած անշահախնդիր սերն ու նվիրվածությունը: 1960 թ. Մ. Տիխոմիրովի և Լ. Խաչիկյանի նախաձեռնությամբ կազմակերպված հնագրագիտական առաջին համամիութենական կոնֆերանսը դարձավ երկու գիտնականների բարեկամության վառ արտահայտությունը: Այդ կոնֆերանսը հիմք հանդիսացավ օժանդակ պատմական գիտությունների գծով սովետական մասնագետների ավանդական հանդիպումների համար, ուր միութենական հանրապետությունների գիտնականները և ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հնագրագիտական հանձնաժողովը ամփոփում են մի քանի տարիների աշխատանքի արդյունքները, ծանոթանում են հնագրագիտության բնագավառում եղած նորագույն նվաճումների հետ և նախանշում մոտակա տարիների համատեղ աշխատանքների պլանները:

Լ. Խաչիկյանի հատուկ ուշադրության առարկան էր հայ ժողովրդի՝ ուսուսակական և ուսուսակական ժողովուրդների հետ ունեցած քաղաքական, անտեսական և մշակութային վաղեմի կապերի պատմությունը: Չեռագրական նոր տվյալների հիման վրա նա լուսարանեց հայ-սլավոնական բարեկամության մի շարք անհայտ էջեր և Հայաստանի՝ պարսկական և թուրքական լծից ազատագրելու համար մղված պայքարի ընթացքում ծնված հայ ժողովրդի ուսուսակական կողմնորոշման պատմական արմատները («Հայկական գաղթավայրերը Ուկրաինայում 16—17-րդ դարերում», Երևան, 1954. «Նոր նյութեր Կիևի հին հայկական գաղթի մասին», Եր., 1961. «Սարգիս արեղայի Ուղեգրությունը», 1970):

Լ. Խաչիկյանի վերջին խոշոր աշխատանքներից մեկը նույնպես նվիրված էր այդ սիրված թեմային, որը շատ կարևոր է և՛ գիտական, և՛ հասարակական-քաղաքական առումով: Վերջինս «Հայերը հին Մոսկվայում և Մոսկվա տանող ճանապարհների վրա» (Երևան, 1980) աշխատությունն է, որը լույս ընծայվեց «Բանբեր Մատենադարանի» 13-րդ հատորում: Սովորաբար Լ. Խաչիկյանն իր աշխատությունները գրում էր հայերեն, բայց դրանց համառոտ տարբերակները տպագրում էր նաև ռուսերեն՝ համամիութենական ընթերցողին հասցնելու նպատակով: Նրա վերջին աշխատության ռուսերեն համառոտ տարբերակը լույս տեսավ գիտնականի մահվանից հետո Լենինգրադում «Ռուս և հայ գրականություններ» ժողովածուում (1982):

Լ. Խաչիկյանը «Բանբեր Մատենադարանի» 3—13-րդ հատորների խմբագիրն էր, պարբերական մի ժողովածու, որը նրա ղեկավարությամբ դարձավ բնագրագիտության, աղբյուրագիտության ու գիտության պատմության հարցերին նվիրված հեղինակավոր հրատարակություններից մեկը: Որպես հեղինակ և խմբագիր նա գործուն մասնակցություն է ունեցել կուլեկտիվ աշխատանքների ստեղծման գործին, որոնց շարքում առանձնանում է «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական բազմահատորյակի 4-րդ հատորը (14—18-րդ դդ.), որտեղ առաջին անգամ մանրամասն լուսարանվում է Հայաստանի և հայկական գաղթավայրերի բիշ ուսումնասիրված ժամանակաշրջանը: Նրա խմբագրությամբ լույս են ընծայվել տասնյակ մենագրություններ, բնական բնագրեր և միջնադարյան մատենագրության հուշարձանների թարգմանություններ: Մահվանից առաջ Լ. Խաչիկյանն ավարտեց և տպագրության հանձնեց «Հովհաննես Տեր-Մովսեսի Զուղայեցու հաշվետվածքը», որը շատ արժեքավոր նյութ է պարունակում Պարսկաստանի, Հնդկաստանի, Նեպալի և Տիբեթի XVII դարի անտեսական պատմության վերաբերյալ: 15 տարի շարունակ Լ. Խաչիկյանը (Հ. Փափագյանի աշխատակցությամբ) աշխատում էր Միջին Արևելքի անտեսության պատմությանը վերաբերող այդ արժեքավոր հուշարձանի վրա: Այդ գիրքը առաջինն է վաղուց նրա կողմից մտահղացված «Տեսական պատմության հուշարձաններ» մատենաշարի, որը հետազոտողներին առատ նյութ է տրամադրելու հայերեն ձևագիր մատյաններից և արխիվային փաստաթղթերից՝ հայ և հարևան ժողովուրդների անտեսական կյանքի մասին և միջազգային առևտրում հայ վաճառականության խաղացած դերը լուսարանելու համար: Լ. Խաչիկյանին շվիճակվեց տեսնել իր գիրքը հրատարակված: Բայց նրա հետազոտությունը և հրատարակումը ամուր հիմքեր ստեղծեց նոր բնագավառում լայն աշխատանք ծավալելու և գիտական շրջանառության մեջ ներգրավելու հայերեն ձևագրերի և վավերագրերի մի ստվար շերտ:

Գիտական և գիտակազմակերպչական բեղմնավոր իր գործունեությունը և Խաչիկյանը զուգակցում էր հասարակական աշխատանքի հետ. նա Երևանի քաղաքային խորհրդի դեպուտատ էր, նրա գործադիր կոմիտեի անդամ, Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի վարչության անդամ, ՍՍՀՄ-ի Իրան ընկերության հայկական բաժանմունքի նախագահ: Նրա ծառայությունները Հայրենիքի առաջ բարձր էին գնահատված սովետական կառավարության կողմից: Նա պարգևատրվել էր «Փողոզուրդների բարեկամության» շքանշանով և մի ջանի մեդալներով: Սովետական գիտնականներից նա առաջինն էր արժանացել Մեսրոպ Մաշտոցի մրցանակի դափնեկրի կոչման:

Մատենադարանի երախտավոր տնօրեն, ականավոր գիտնական և քաղաքացի, հայագիտության անխոնջ մշակ Լևոն Խաչիկյանի պայծառ անունն ու հիշատակը հավերժ կմնա գիտության պատմության մեջ և մեր սրտերում:

ՍԵՆ ԱՐԵՎՇԱՍՏԱՆ

Մատենադարանի տնօրեն,
ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի
թղթակից անդամ